

Հայաստանի պետական ագրարային համալսարանում ուսանողների  
հաճախումների հաշվառման և անհատական պարապմունքների  
կազմակերպման

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

1. Սույն կանոնակարգը կարգավորում է Հայաստանի պետական ագրարային համալսարանի ուսանողների հաճախումների և փախադրումների, վերականգնումների, 2-րդ մասնագիտություն ստանալու ժամանակ, գործող ուսումնական պլաններով առաջացած առարկաների տարբերությունները հանձնելու, ինչպես նաև տարբեր պատճառներով ուսումնական պարապմունքները բաց թողած ուսանողների համար կազմակերպվող անհատական պարապմունքների իրականացման գործընթաց:
2. Ուսումնական պլաններով և ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցով նախատեսված ուսումնական պարապմունքների բոլոր ձևերին (դասախոսություն, լաբորատոր, գործնական, սեմինար, ուսումնասարտադրական պրակտիկաներ) ուսանողների մասնակցությունը պարտադիր է:
3. Ուսանի կողմից անհարգելի պատճառներով ուսումնական պարապմունքները բաց թողած ժամաքանակը լրացման ենթակա չէ: Երբ կիսամյակի ընթացքում անհարգելի բացակայությունների ժամաքանակը գումարվելով հասնում է 30 ժամի, ուսանողի հարցը, դեկանատի և ուսանողական խորհրդի ներկայացմամբ, քննարկվում է ռեկտորատում համապատասխան միջոցառում ձեռնարկելու նպատակով, ընդհուպ մինչև հեռացումը:
4. Հարգելի, հիմնավորված պատճառներով ուսումնական պարապմունքները բաց թողած ուսանողները դրանք լրցնում են ուսումնական պարապմունքներին ներկայացնելու ընթացիկ և հաջորդ շաբաթվա ընթացքում, որպես կանոն շաբաթ օրերին: Նշված ժամկետում հարգելի պատճառով բաց թողած դասերը չլրացնելու դեպքում ուսանողի հարցը դեկանի ներկայացմամբ քննարկվում է ռեկտորատում, ընդհուպ մինչև համալսարանից հեռացումը:
5. Հարգելի պատշառով ուսումնական պարապմունքներից բաց թողած դասերի համար հիմնավոր փաստաթղթերի դեկանատ ներկայացման, դրանց հաշվառման ու գրանցման գործընթացը կանոնակարգվում է «Ուսանողների կողմից հարգելի պատճառով ուսումնական պարապմունքներից բացակայությունների հիմնավորման ու գրանցման գործընթացը կանոնակարգելու» վերաբերյալ փաստաթղթերի ընդունումից հետո դեկանը տեղեկացնում է համապատասխան ամբիոնների վարիչներին:

Ուսանողների բացակայությունների վերաբերյալ տվյալները դասախոսը նույն օրվա ընթացքում գրավոր ներակայացնում է ամբիոնի վարիչին: Ամբիոնի վարիչը ուսանողների շաբաթական բացակայությունները տվյալ շաբաթվա վերջին ներկայացնում է համապատասխան դեկանատ: Դեկանատը ամփոփում է հաճախումների արդյունքները և ընթացք տալիս կանոնակարգի համաձայն: Հարգելի պատճառով ուսանողի կողմից բաց թողած պարապմունքների լրացման գործընթացի կազմակերպման և իրականացման ողջ

պատասխանատվությունը դրվում է համապատասխան ամբիոնի վարիչի և տվյալ ուսանողի վրա:

6. Հիվանդության պատճառով (սահմանված կարգով հիմնավոր փաստաթղթի ներկայացման դեպքում) ուսումնական պարապմունքներից 30 օր անընդմեջ բացակայած ուսանողի հարցը ֆակուլտետի դեկանատի և ուսանողական խորհրդի համատեղ ներկայացմամբ քննարկվում է ռեկտորատում և գործող կարգի համաձայն ձևակերպվում է ակադեմիական արձակուրթ՝ կամ կուրի կրկնում:

7. Ուսանողների փոխադրումների, վերականգնումների և 2-րդ մասնագիտություն ստանալու դեպքում գործող և նախորդ ուսումնական պլաններով նախատեսված առարկաների տարբերությունները որոշելիս, առարկայի ծրագիրը համարվում է ավարտված, եթե ժամաքանակների տարբերությունը չի գերազանցում 30 %-ը, նկատի առարկայի աստեստավորման ձևից (ստուգարք կամ քննություն):

Առարկաների տարբերության բաժինը, ինչպես նաև կուրսային նախագծի (աշխատանքի) տարբերությունները սահմանում է ամբիոնը դեկանատի հետ համատեղ, հաստատվում է ուսումնական գծով պրոռեկտորի կողմից:

8. Ուսանողը պարտավոր է յուրացնել և հանձնել սահմանված առարկայական տարբերությունները դեկանատի կողմից սահմանված առարկայական տարբերությունները ր ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից հաստատված ժամանակացույցով, բայց ոչ ուշ, քան տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը:

9. Տարբերություն առարկայի լրացման ենթակա հաշվարկային ժամերի քանակը սահմանվում է տվյալ առարկայի գործող ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակի 20 %-ի չափով, սակայն ոչ պակաս, քան 10 ժամ: Դասախոսությունները լրացվում է ռեֆերատների և մշակումների տեսքով, իսկ լաբորատոր-գործնական պարապմունքերը համալսարանում ընդունված կարգով, մեծ տեղ հատկացնելով ուսանողների ինքնուրույն աշխատանքին և խորհրդատվությանը:

10. Փոխադրումների, վերականգնումների և 2-րդ մասնագիտություն ստանալու ժամանակ անհատական պարապմունքները կազմակերպվում են վճարովի հիմունքներով, բացառությամբ.

ա. Իսումնառության ընթացքում իսկական զինվորական զինձառայության զորակոչված և զորացրվելուց հետո ուսումը շարունակելու թույլտվություն ստացած ուսնադների,

բ. Ակադեմիական արձակուրդից սահմանված կարգով վերադարձած ուսանողների,

գ. Ուսումնական պարապմունքներից բացակայած ուսանողների,

դ. Առարկայական կուրսային նախաիծ (աշխատանք) կամ առարկայի տարբերություն բաժինը լրացնող ուսանողների,

Մեկ ժամվա վարձավճարի չափը որոշվում է ըստ փաստացի ծախսումների:

11. Սույն կանոնակարգը գործողության մեջ է մտնում 2007 թ.-ի սեպտեմբերի 1-ից:

12. 2007թ.-ի օգոստոսի 30-ից ուժը կորցրած ճանաչել 2002թ.-ի դեկտեմբերի 14-ին գիտական խորհրդում հաստատված (արձ N 2) Հաջկական

գյուղատնտեսական ակադեմիայում անհատական պարապմունքների կազմակերպման կանոնակարգը», ինչպես նաև նույն հարցի վերաբերյալ գիտական խորհրդի 2004 թ. դեկտեմբերի 15 -ի (արձ N 8) նիստի որոշումը (հրաման N 138/ԱԾ, 27.12.2004 թ.):

Հաստատված է  
ՀՊԱՀ գիտական խորհրդում  
2007 թ. հուլիսի 16-ն  
(արձ N 14)

## ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ

Հիմք ընդունելով ռեկտորատի 2008թ. ապրիլի 11-ի որոշումը 2007թ. հուլիսի 17-ին հաստատված «Հայաստանի պետական ագրարային համալսարանում ուսանողների հաճախումների հաշվառման և անհատական պարապմունքների կազմակերպման կանոնակարգի» 3-րդ կետում կատարել հետևյալ լրացումը.

Այն ուսանողները, ովքեր կիսամյակի ընթացքում տվյալ առարկայից անհարգելի բացակայել են ուսումնական պլանով սահմանված լսարանային ժամաքանակի 15 %-ից ավելին, թույլատրվում են տվյալ առարկայի քննությանը (ստուգարքին) բաց թողած ժամերը լրացնելուց հետո, ընդ որում անհարգելի բացակայություններ լրացումը թույլատրվում է կատարել տվյալ կիսամյակի պետական կուրսն ավարտելուց հետո (կիսամյակի վերջում):

Ծանոթություն – Տվյալ առարկայի սահմանած մինչև 15 % անհարգելի բացակայություն ունեցող ուսանողները թույլատրվում են նույն առարկայի քննությանը (ստուգարքին) առանց պարտադիր լրացման, բաց թողած նյութի ինքնուրույն յուրացման կարգով:

Հիմք՝ Ռեկտորատի 2008 թ. ապրիլի 11-ի որոշումը (արձանագրություն 15)

Ի փոփոխումն ՀՊԱՀ-ի գիտական խորհրդի 2007 թ. հուլիսի 16-ի 27.03.2010 թ. նիստում (արժանագրություն 14) հաստատված «Հայաստանի պետական ագրարային համալսարանում ուսանողների հաճախումների հաշվառման կարգի և անհատական պարապմունքների կազմակերպման» կանոնակարգի՝

Կանոնակարգի 3-րդ կետը ձևակերպել հետևյալ կերպ.

Սահմանել, որ մինչև 30 ժամ անհարգելի բացակայություն ունեցող ուսանողների բաց թողած ժամերի լրացումները կատարվում են մինչև հաջորդ ամսվա 10-ը: Լրացման պատասխանատվությունը դրվում է ֆակուլտետի դեկանի և համապատասխան ամբիոնի վարիչի վրա:

30-ից ավելի ժամ անհարգելի բացակայություն ունեցող (այդ թվում նաև նախորդ ամսում չլրացրած) ուսանողների հարցը, անհատական կարգով քննարկվում է ռեկտորատում և կայացվում է համապատասխան որոշում՝ լրացման

թույլտվության, կարգապահական տույժ և լրացման թույլտվություն, հեռացում համալսարանից:

Ռեկտորատի որոշմամբ լրացման թույլտվություն տալուց հետո, լրացման պատասխանատվությունը դրվում է ռեկտորատի ներկայացուցչի, ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչի վրա:

Հիմք դեկանների զեկուցագրերը և գիտական խորհրդի 26.03.2010թ. որոշումը (արձանագրություն 17)